

Հաստիք

Էլիզաբեթ Ռեսե-Ղեկրի, ԺՆԵՎԻ ԿՈՉ-ի նախագահ և համահիմնադիր, ֆիզիոթերապեվտ, քաղաքագետ և մարդու իրավունքների պաշտպան: Քսանից ավելի տարիների ընթացքում նա աշխատել է փախստականների, տանջահարությունների և ականների ոլորտի հետ կապված ոչկառավարական կազմակերպություններում: Նրա գործունեությունը ճանաչում գտավ 200, թվականին, երբ Էլիզաբեթի ազգանունը ընդգրկվեց Շվեյցարիայից խաղաղության Նոբելյան մրցանակի արժանանալու համար ներկայացված հազար կնոջ շրջանում: 2000 թվականին, մինչև Ժնևի Հանրապետության Կառավարության և Կանտոնի Նախագահ ընտրվելը, 12 տարվա ընթացքում նա այդ կառավարության անդամ էր: Նա նաև հիմնադրել է ականներից վնասվածներին օգնելու Շվեյցարիայի հիմնադրամը և հանդիսանում է ՀՀԱ -ի արգելման Շվեյցարիայի ընկերության համահիմնադիր: Նա մինևույն ժամանակ Ժնևի զարգացման հետազոտությունների ինստիտուտի խորհրդի անդամ է:

Մեհմեջ Բալչի, Մերձավոր Արևելքի և Կոլումբիայի ծրագրերի տնօրեն և Եվրամիությունում ԺՆԵՎԻ ԿՈՉ-ի մշտական ներկայացուցիչ, լրագրող և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի ակտիվիստ է: Օտար լեզուների ուսումնասիրությունից հետո, նա երկար տարիների ընթացքում աշխատակցել է քրդերի տարբեր քաղաքական և ոչկառավարական կազմակերպությունների հետ, գործնականում որպես Եվրամիության, ՄԱԿ-ի, Եվրոպայի խորհրդի և ԵԱՀԿ-ի ներկայացուցիչների օգնական: Նա բազմաթիվ հոդվածներ է հրատարակել քրդական և թուրքական մամուլում: Նա հակա-հետևակային ականների արգելման Թուրքիայի ընկերության հիմնադիր է և հակա-հետևակային ականների արգելման միջազգային ընկերության ոչպետական արտոքների աշխատանքային խմբի անդամ: Նա ԺՆԵՎԻ ԿՈՉ -ի 2001, 2002, 2003 և 2004 թվականների Թուրքիայի մասին հաշվետվությունների, ինչպես նաև „Թուրքիան առանց ականների,, բրոշյուրի հեղինակ է:

Մարկուս Խասկե, Հարավային Կովկասի ծրագրով սպա, ուսումնասիրել է փիլիսոփայություն և Գրականություն Բեռլինում: Փիլիսոփայության գծով բարձրագույն կրթություն ստանալուց հետո Նա կամավոր էր և աշխատել է տարբեր ոչ պետական կազմակերպությունների հետ ինչպես մարդու իրավունքների, բնապաշտպանության ու զինաթափման ասպարեզներում, այնպես էլ մարդասիրական հակաականային գործողությունների հարցերով: 2003-2004թ.թ. նա աշխատել է Mediko International-ի հետ Աֆղանստանում: Մինչև 2007թ. Փետրվարին Ժնևյան Կոչում աշխատանքի անցնելը նա կոորդինացնում էր Action Group Landmine.de - հակահետևակային ականների արգելման Գերմանական ընկերությունը: Նա հանդիսանում է 1999-2004թ.թ. Գերմանիայի գծով Ականային Մոնիտորի հաշվետվությունների հեղինակ և համահեղինակ: